Հավելված N 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի մայիսի..... ....-ի N ..... հրամանի

«Հավելված N 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020 թվականի մայիսի 18-ի N 23-Լ հրամանի»

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն են՝

1. նպաստել Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանությանը, պահպանվածությանը, օգտագործմանը և հանրահռչակմանը (այդ թվում՝ միջազգային հարթակներում)

2. ապահովել պատմության և մշակույթի հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պետական հաշվառումը, ուսումնասիրումը, պահպանությունը, ամրակայումը, նորոգումը, վերականգնումն ու օգտագործումը

3. կազմակերպել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության բնագավառում աշխատանքները՝ համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթներն՝ ըստ բաժինների.

8.1. Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժինը՝

1) մասնակցում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը,

2) ներկայացնում է առաջարկություններ հուշարձանների ուսումնասիրության, պահպանության զարգացման հնարավորությունների, դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի և կարգերի բարելավման վերաբերյալ,

3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան հուշարձանների պահպանության բնագավառին վերաբերվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը,

4) կազմակերպում է հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների պետական հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը,

5) սահմանված կարգով համաձայնեցում և նախարարություն հաստատման է ներկայացում հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության նպատակով սահմանված պահպանական գոտիների նախագծերը և դրանց օգտագործման պայմանակարգերը (ռեժիմը),

6) սահմանված կարգով համաձայնություն կամ եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, գոտևորման նախագծերի, դրանց հատվածների կառուցապատման, հողերի նպատակային նշանակության փոխելու վերաբերյալ,

7) սահմանված կարգով թույլտվություն է տալիս հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար, գրանցում դրանք,

8) արգելում կամ դադարեցնում է հուշարձանների և պատմական միջավայրի տարածքներում հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին,

9) կազմակերպում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետախուզման ու պեղումների համառոտ հաշվետվությունների ընդունումը,

10) սահմանված կարգով համակարգում է հուշարձաններ ունեցող բնակավայրերի գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, գոտևորման նախագծերի, դրանց հատվածների կառուցապատման, հողերի նպատակային նշանակության փոխելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,

11) սահմանված կարգով համակարգում է հուշարձանների պետական հաշվառման և փաստագրման աշխատանքները, ներակայացնում առաջարկություն նոր հայտնաբերված հուշարձանի կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ,

12) ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում է տեղեկատվություն հուշարձանների պահպանության և օգտագործման վերաբերյալ,

13) ապահովում է հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր) ստացումը և կնքումը,

14) սահմանված կարգով քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները), նպաստում դրանցում բարձրացված հարցերի լուծմանը,

15) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

8.2.Հուշարձանների վերականգնման բաժինը՝

1) մշակում է հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերը, առանձին միջոցառումները ինչպես նաև դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը,

2) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ հուշարձանների ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություն՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,

3) ապահովում է հուշարձանների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները

և առաջարկություններ է ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ,

4) տալիս է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ համաձայնություններ և եզրակացություններ,

5) սահմանված կարգով տալիս է հուշարձանների փոփոխման և տեղափոխման վերաբերյալ եզրակացություն, դրանց նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ համաձայնություն,

6) սահմանված կարգով վարում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման նախագծային փաստաթղթերի և աշխատանքների վերաբերյալ շտեմարանները, ինչպես նաև ապահովում է հուշարձանների մասին տեղեկատվության մատչելիությունը,

7) տալիս է համապատասխան համաձայնություն հուշարձանների օգտագործման ձևի, նպատակի կամ բնույթի փոփոխման վերաբերյալ,

8) սահմանված կարգով տալիս է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և դրանց տարածքների բարեկարգման նպատակով հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար թույլտվություն, ինչպես նաև գրանցում դրանք,

9) սահմանված կարգով ապահովում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման ու պեղման իրականացման ընթացքում հուշարձանների և դրանց մասերի անվտանգությունը, ինչպես նաև ընդունում է կատարված աշխատանքների արդյունքները և(կամ) գիտական հաշվետվությունները,

10) արգելում կամ դադարեցնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքները, եթե դրանք վնասել կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին,

11) ներկայացնում է հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության բնագավառում մշակվող օրենսդրական և մեթոդական փաստաթղթերի,

հանրապետական, տարեկան և հեռանկարային ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ,

12) սահմանված կարգով քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումներ, բողոքներ և այլն) ինչպես նաև առաջարկում լուծումներ դրանցում բարձրացված հարցերի վերաբերյալ,

13) ապահովում է նախարարության գիտամեթոդական խորհրդի աշխատանքների կազմակերպումը,

14) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

8.3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժինը՝

1) համակարգում է հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների (ICOMOS, ICCROM, ALIPH, ACHA, Council of Europe, «Եվրոպական ժառանգության օրեր», «Եվրոպական հնագիտության օրեր» և այլն) հետ համագործակցությունը,

2) համակարգում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկերում հուշարձանների գրանցման հայտերի պատրաստումը,

3) համակարգում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուղեցույցներին համապատասխան նախնական ցանկերում եղած հուշարձանների տվյալների թարմացումը,

4) համակարգում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկերում գտնվող հուշարձանների կառավարման պլանների մշակումը,

5) իրականացնում է հուշարձանների պահպանության բնագավառում միջազգային պայմանագրերի պահանջների համապատասխանության նկատմամբ մոնիտորինգ (վերահսկողություն),

6) աջակցում է հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառում հասարակական, գիտակրթական, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,

7) առաջարկություններ է ներկայացնում հուշարձաններն ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքները Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկելու վերաբերյալ,

8) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան հուշարձանների պահպանության բնագավառին վերաբերվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը,

9) կազմակերպում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկերում գտնվող հուշարձանների կառավարման պլանների գործողությունների ծրագրի պատշաճ իրականացումը

10) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ,

11) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

8.4. Հուշարձանների հաշվառման կադաստրային բաժինը՝

1) հավաքագրում, հաշվառում և դասակարգում է հուշարձանների մասին սկզբնական տվյալները և ցուցանիշները,

2) մուտքագրում է սկզբնական հաշվառման նյութերը և ցուցանիշները հուշարձանների պետական կադաստրի գրանցամատյաններում և հուշարձանների անձնագրերում,

3) ձևավորում է հուշարձանների վերաբերյալ սկզբնական հաշվառման տվյալների և ցուցանիշների (տեքստային նյութեր, աղյուսակներ, քարտեզագրական և գրաֆիկական այլ նյութեր) էլեկտրոնային տարբերակները՝ տեղեկությունների պահպանման և փոխանակման միասնական ցանցի և ծրագրային ապահովման շրջանակներում,

4) սահմանված կարգով վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրի) և շտեմարանները, ինչպես նաև ապահովում է հուշարձանների մասին տեղեկատվության մատչելիությունը,

5) իրականացնում է հուշարձանների ընթացիկ հաշվառումը, ինչը ներառում է հուշարձանների պետական կադաստրի գրանցամատյաններում, հուշարձանների անձնագրերում և տվյալների շտեմարանում ներառված տեղեկությունների թարմացումը՝ դրանց հավաստիությունը և արդիականությունն ապահովելու նպատակով,

6) սահմանված կարգով տրամադրում է հուշարձանների վերաբերյալ տեղեկություններ,

7) համակարգում է հուշարձանների տարածքների պետական գրանցման գործընթացի և անշարժ գույքի նկատմամբ պետական իրավունքների գրանցման վկայականների ձեռքբերման աշխատանքները,

8) սահմանված կարգով քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումներ, բողոքներ և այլն) ինչպես նաև առաջարկում լուծումներ դրանցում բարձրացված հարցերի վերաբերյալ,

9) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

10. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

12. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

13. Վարչության պետը, Վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

14. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, բաժինների պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվու թյան, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և

ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

15.1. Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժին,

15.2. Հուշարձանների վերականգնման բաժին,

15.3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժին,

15.4. Հուշարձանների հաշվառման կադաստրային բաժին: